

**5.2. Դժբախտ պատահարներն արտադրությունում  
2018 թվականին**

Ըստ ՀՀ կազմակերպություններում աշխատանքային գործունեության ընթացքում ժամանակավոր անաշխատունակության, դժբախտ պատահարների և վնասվածքների վերաբերյալ ստացված վիճակագրական հաշվետվությունների ամփոփ տվյալների, աշխատանքի անվտանգության նորմերի խախտման պատճառով 2018թ. արձանագրվել է 42 արտադրական դժբախտ պատահար: 1 000 աշխատողի հաշվով (նրանց թվաքանակը հաշվարկված է ըստ ներկայացված հաշվետվություններում բերված աշխատողների միջին ցուցակային թվաքանակների) տուժածների տեսակարար կշիռը կազմել է 0.6:

**Դժբախտ պատահարների դեպքերի քանակն ու տուժածների թվաքանակն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2018թ.**

	Դեպքերի քանակը, միավոր	Տուժածների թվաքանակը, մարդ		նրանցից՝ մահացածներ	
		ընդամենը	նրանցից՝ կանայք	ընդամենը	նրանցից՝ կանայք
ք.Երևան	10	10	-	3	-
Արագածոտն	-	-	-	-	-
Արարատ	3	3	-	-	-
Արմավիր	1	1	-	-	-
Գեղարքունիք	2	2	-	2	-
Լոռի	6	6	-	-	-
Կոտայք	2	2	-	1	-
Շիրակ	1	1	-	-	-
Սյունիք	17	17	3	3	-
Վայոց ձոր	-	-	-	-	-
Տավուշ	-	-	-	-	-
<b>Ընդամենը ՀՀ</b>	<b>42</b>	<b>42</b>	<b>3</b>	<b>9</b>	<b>-</b>

**Դժբախտ պատահարների դեպքերի քանակն ու տուժածների թվաքանակն ըստ կազմակերպությունների տնտեսական գործունեության հիմնական տեսակների (ըստ ՏԳՏԴ խմբ. 2-ի), 2018թ.**

	Դեպքերի քանակը, միավոր	Տուժածների թվաքանակը, մարդ		նրանցից՝ մահացածներ	
		ընդամենը	նրանցից՝ կանայք	ընդամենը	նրանցից՝ կանայք
B	Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	20	20	3	3
C	Մշակող արդյունաբերություն	19	19	-	6
D	Էլեկտրականության, գազի, ջրի և ջրվորակ օդի մատակարարում	3	3	-	-
<b>Ընդամենը</b>		<b>42</b>	<b>42</b>	<b>3</b>	<b>9</b>

Աշխատունակությունը 1 և ավելի օրով կորցրած անձանց 2018թ. ավարտված ժամանակավոր անաշխատունակության հիման վրա հաշվարկված անաշխատունակ մարդ-օրերի գումարային քանակը կազմել է 1 547:

Դժբախտ պատահարի հետևանքով ՀՀ Արարատի մարզում 1 տղամարդ դարձել է III խմբի հաշմանդամ:

**5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ**

Երևան քաղաքում աշխատանքի գնալու ճանապարհին տեղի է ունեցել 1 դժբախտ պատահար, որի արդյունքում տուժել է մեկ տղամարդ: ՀՀ Սյունիքի մարզում աշխատանքից տուն վերադառնալու ճանապարհին տեղի է ունեցել 2 դժբախտ պատահար, որի արդյունքում տուժել է երկու տղամարդ:

Դժբախտ պատահարի հետևանքով աշխատունակությունը մասամբ կորցրած 1 տղամարդ փոխադրվել է այլ աշխատանքի:

**Աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման ծախսերը, 2018թ.**

*մլն. դրամ*

	Ընդամենը
Ժամանակավոր անաշխատունակության նպաստ	15.2
Կորցրած աշխատավարձի փոխհատուցում	28.9
Միանվագ նպաստ	14.9
Բժշկական, սոցիալական և մասնագիտական վերականգման ծախսեր	19.5
Այլ ծախսեր	56.1
<b>Ընդամենը</b>	<b>134.6</b>

**Աշխատանքի պահպանման միջոցառումների վրա ծախսված գումարը, 2018թ.**

*մլն. դրամ*

	Ընդամենը
Հատուկ արտահագուստի ձեռք բերման համար	595.0
Անհատական պաշտպանության միջոցառումների վրա	342.2
Այլ ծախսեր	44.3
<b>Ընդամենը</b>	<b>981.5</b>